Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորում բոլոր կանանց Մարտի 8-ի տոնական առիթով:

Մեր հայցն է, որ Աստված Իր հանապազ խնամքի ներքո պահի բոլոր մայրերին, քույրերին ու դուստրերին և զորացնի աստվածօրհնյալ հույսի, հավատի ու սիրո մեջ, որպեսզի շնորհներով ու առաքինություններով զարդարյալ՝ կրթեն ու մեծացնեն արժանավոր զավակներ և իրենց ձեռքբերումներով ու նվաճումներով նորանոր ավանդներ բերեն հայրենական մեր կյանքի տարբեր ասպարեզներում: Այսօր կանայք գիտնականներ են և ուսուցիչներ, արվեստի մշակներ, մասնակից են պետական կառավարմանը և ամենուր նախանձախնդիր են ու պատրաստակամ:

Թող Տերը քաջառողջ ու եռանդաշատ պահպանի տիկնանց և օրիորդաց, զորացնի իրենց կոչման մեջ՝ լինելու խարիսխն ընտանիքի, խտացումը սիրո, հավատարմության ու անձնուրաց նվիրումի, և միշտ ունկնդիր լինի խաղաղության, բարօրության ու երջանկության հայցով երկինք բարձրացող նրանց աղոթքներին:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին
8 մարտի 2004 թ.